ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԲԵՄ ԼՈՒՐԵՐ

ՍՈՒՐԲ ՂԵՒՈՆԴՅԱՆՑ ՔԱՀԱՆԱՅԻՑ ՀԻՇԱՏԱԿՈՒԹՅՈՒՆԸ ԱՎՍՏՐԱԼԻԱՅԻ ԵՒ ՆՈՐ ԶԵԼԱՆԴԻԱՅԻ ՀԱՅՈՑ ԹԵՄՈՒՄ

Մարտի 1-ին, Ավստրալիայի եւ Նոր Զելանդիայի Հայոց թեմի հոգեւոր առաջնորդ՝ Գերաշնորհ Տ. Աղան արք. Պալեոզեանի գլխավորությամբ Սուրբ Ղեւոնդյանց քահանայից հիշատակության օրը հանդիսավորությամբ նշվեց Սիդնեյի Սուրբ Հարություն եկեղեցում:

Տոնի առիթով Ավստրալիայի Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցու հոգեւորականաց դասը եւ հավատացյալ ժողովուրդը մեծ խանդավառությամբ հավաքվել էին Սիդնեյի Սուրբ Հարություն առաջնորդանիստ եկեղեցում՝ մասնակցելու տոնակատարությանը:

Տոնի առիթով մատուցվեց Սուրբ եւ անմահ Պատարագ. օրվա պատարագիչն էր արժանապատիվ Տ. Ավետիս քհն. Համբարձումյանը: Պատարագի ընթացքում օրվա խորհրդի մասին հավուր պատշաճի քարոզ խոսեց Մելբուռնի հայոց համայնքի հոգեւոր հովիվ հոգեշնորհ Տ. Կիրակոս աբդ. Դավթյանը, հատկանշելով, որ «Ս. Ղեւոնդյանց նահատակության խորհուրդը դարեր շարունակ ոգեւորել ու ոգեւորելու է մեր ժողովրդին, որն իր 1700-ամյա քրիստոնեական պատմության ընթացքում ամենադժվար պահերին իր ոգեշնչումը եւ իր հոգեւոր կյանքը վերապրելու օրինակն է ստացել Ղեւոնդյանց սուրբերի նահատակության պատմությունից»:

Պատարագից հետո առաջնորդարանին կից «Էդգարյան» սրահում տեղի ունեցավ օրվա խորհրդին նվիրված բանախոսություն: Բանախոսությանը բովանդակալից ելույթով ներկաներին հանդես եկան հոգեբան Իդա Սողոմոնյանը եւ լրագրող Մարինե Ավագյանը: Ի. Սողոմոնյանը, իբրեւ գլխավոր բանախոս, անդրադարձավ Ղեւոնդյանց քահանայից տոնի խորհրդին, ինչպես նաեւ ավետարանական մեջբերումներով հանգամանորեն ներկայացրեց հոգեւորականների առջեւ ծառացած արդիական խնդիրներն ու մարտահրավերները, հատկանշելով երիտասարդներին առավել հետաքրքրող ինտերնետային կայքերի միջոցով եկեղեցականին հաղորդ դառնալու հանգամանքը:

Հանդիսությունը եզրափակվեց Գերաշնորհ Սրբազան Հոր հայրական պատգամով եւ աղոթքով:

ԴԻՎԱՆ ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆԻ
ԱՎՍՏՐԱԼԻՈ ԵՒ ՆՈՐ ԶԵԼԱՆԴԻԱՅԻ

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍՆ ԸՆԴՈՒՆԵՑ ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ԴՊՐՈՑՆԵՐԻ ՏՆՕՐԵՆՆԵՐԻՆ

Մարտի 3-ին, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում, Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց ՀՀ տարբեր մարզերից ժամանած հանրակրթական երեսուներկու դպրոցների տնօրենների՝ ուղեկցությամբ Մայր Աթոռի Քրիստոնեական դաստիարակության կենտրոնի տնօրեն Տ. Վարդան աբեղա Նավասարդյանի:

Հայր Վարդանը Նորին Սրբությանը ներկայացրեց տնօրեններին, որ Մայր Աթոռ են եկել Ս. Վարդանանց տոնին՝ հաղորդակցվելու օրվա սրբազան խորհրդին եւ ստանալու Վեհափառի օրհնությունը: Օգտվելով առիթից, որ Վարդանանց տոնը նաեւ Նորին Սրբության անվանակոչության օրն է, Հայր Վարդանը ամենքի անունից շնորհավորեց Ամենայն Հայոց Հայրապետին:

Այնուհետեւ ներկաներին իր օրհնությունն ու պատգամը բերեց Ամենայն Հայոց Կաթողիկոսը՝ գոհունակություն հայտնելով, որ ազգային դպրոցի տնօրենները Ս. Էջմիածին են այցելել ազգային-եկեղեցական կյանքում հիշարժան այս օրը: Նորին Սրբությունը ցավով նկատեց, որ Հայոց ցեղասպանության պատճառով եւ խորհրդային անաստվածության տարիներին, երբ կազմալուծվեց ազգային եւ եկեղեցական հայոց կյանքը, ազգային շատ տոներ, ավանդույթներ ու սրբազան նվիրական խորհուրդներ դուրս են մղվել մեր կյանքից, որոնցով դարեր շարունակ կերտվել է նկարագիրը ու գիտակցությունը հայ ժողովրդի: Անդրադառնալով Ս. Վարդանանց նվիրական խորհրդին՝ Վեհափառ Հայրապետն ասաց. «Վարդանանց հերոսական պատերազմի ոգին հերոսացումի ոգի է, այդ ոգին մեր ազգի համար իր մեջ կրում է հավերժության խորհուրդը, այդ ոգին անմահության ոգին է: Վարդանանց տոնը պանծացումն է հայրենասիրության եւ աստվածսիրության»:

Նորին Սրբությունը նաեւ իր գնահատանքը հայտնեց տնօրեններին՝ դպրոցներում «Հայ Եկեղեցու պատմություն» առարկայի ուսուցման հանդեպ ցուցաբերվող նախանձախնդիր վերաբերմունքի համար՝ կարեւորելով, որ մեր ժամանակներում մանուկների ու պատանիների մեջ առավել զորանա ազգային արժեքներով ապրելու եւ առաջնորդվելու ոգին ու գիտակցությունը: «Հայոց Եկեղեցին ազգային արժեքների մեր գանձարանն է: Մեր Եկեղեցու պատմությունը անքակտելի մասն է մեր ժողովրդի պատմության: ... Պետականության կորստյան ծանր ու դժվարին պայմաններում Հայոց Եկեղեցին ստանձնել է ազգի առաջնորդությունը եւ Աստծո օրհնության ներքո համահավաք պահել մեր ժողովրդին իր հայրենիքում, Ս. Հոգու առաջնորդությամբ կազմակերպել մեր ժողովրդի կյանքը: Եկեղեցին միշտ կարողացել է աննկուն պահել մեր զավակների ոգին եւ ոգեշնչել նրանց դեպի ազատ ու անկախ կյանք, պետականության վերականգնում: Այդ իմաստով՝ մեր Եկեղեցին անդադրում պայքարել է, որ մեր ազգն օր առաջ կարողանա վերականգնել իր պետականությունը եւ նրա ներքո ապահով դարձնել մեր ժողովրդի կյանքը, երաշխավորված՝ նրա լուսավոր ապագան», - նշեց Վեհափառ Հայրապետը:

Հանդիպման ավարտին Նորին Սրբությունը պատասխանեց տնօրենների տարբեր հարցերի: Հասարակական կյանքում առկա ցավալի եւ մերժելի երեւույթների հաղթահարման գործում կարեւոր նկատելով մանկավարժների առաքելությունը՝ Վեհափառ Հայրապետը հորդորեց նրանց կրթել ու դաստիարակել հայորդիներին Վարդանանց նույն նվիրական

արժեքներով, սրբազան գաղափարներով, «վասն հայրենեաց եւ վասն հաւատոյ» խորհրդով:

Հանդիպումից հետո տնօրենները Մայր Տաճարում մասնակցեցին Ս. Պատարագի արարողությանը, հավարտ որի ներկա գտնվեցին տոնին նվիրված գեղարվեստական ցերեկույթին, այցելեցին Մայր Աթոռի թանգարաններ:

ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆՈՒՄ ՆՇՎԵՑ ՍՐԲՈՑ ՎԱՐԴԱՆԱՆՑ ՏՈՆԸ

Մարտի 3-ին Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցին տոնախմբեց Սրբոց Վարդանանց զորավարաց հիշատակը: Տոնի առիթով Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում, հանդիսապետությամբ Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսի, մատուցվեց Սուրբ Պատարագ: Պատարագիչն էր Տ. Եղիշե վարդապետ Ավետիսյանը:

Քարոզի ընթացքում անդրադառնալով Վարդանանց պատերազմի ու քաջարի զորավարների նահատակության խորհրդին՝ պատարագիչ Հայր Սուրբը մասնավորապես նշեց. «Մենք չենք կարող ուրանալ մեր լինելիությունը, իսկ մեր լինելիությունը քրիստոնեության դրոշմն է կրում: Գաղափարներ կան, որոնց համար արժե կյանք տալ եւ առանց որոնց չարժե ապրել նույնիսկ մեկ վայրկյան: Այդպիսի նվիրական գաղափարներից մեկն է Հավատքը, որի համար Վարդանանց քաջերն իրենց կյանքը տվեցին: Վարդանանց շնորհիվ քրիստոնեական հավատը դյուցազնություն եղավ. անարդարության, անիրավության դեմ պայքարելու արիությունը շաղկապվեց ճշմարիտ հավատքին՝ դառնալով անպարտելի»:

Պատարագիչը, շնորհավորելով բոլոր նրանց, ովքեր կրում են Վարդանանց հերոսամարտի քաջ նահատակների անունները, մաղթեց, որ Վարդանանց նվիրական ոգին երբեք չնվազի մեր ազգի մեջ եւ նոր Վարդաններ ու Ղեւոնդներ միշտ ելնեն մեր ժողովրդի միջից ի պաշտպանություն հայրենիքի եւ մեր սուրբ հավատի:

Սրբոց Վարդանանց զորավարաց հիշատակության օրը Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցին նշում է նաեւ Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի անվանակոչության տոնը: Այս առիթով Սուրբ Պատարագի ավարտին Իջման Ս. սեղանի առջեւ նախագահությամբ Մայր Աթոռի դիվանապետ Տ. Արշակ եպիսկոպոս Խաչատրյանի եւ մասնակցությամբ թեմական առաջնորդների եւ Մայր Աթոռի միաբանության, կատարվեց Հայրապետական մաղթանք: Եկեղեցականաց դասը եւ ներկա բարեպաշտ ժողովուրդը միասնաբար աղոթք բարձրացրեցին առ Աստված՝ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի անսասանության ու պայծառության եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսի քաջառողջության, խաղաղ ու արգասաբեր հայրապետության համար:

ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

ՀԱՆԴԻՍՈՒԹՅՈՒՆ ՄԱՅՐ ԱԹՈՌ Ս. ԷՋՄԻԱԾՆՈՒՄ

Մարտի 3-ին, Ս. Վարդանանց տոնի առիթով Մայր Աթոռ Ս. Էջմիածնի հովանու ներքո գործող Էջմիածնի Հայոց դպրոցաց տանը, Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսի նախագահությամբ տեղի ունեցավ Ս. Վարդանանց տոնին նվիրված հանդիսություն: Միջոցառումը կազմակերպվել էր Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի Գեւորգյան հոգեւոր ճեմարանի եւ Երեւանի պետական համալսարանի համատեղ ջանքերով:

Հանդիսությանը ներկա էին Հայաստանյայց Առաքելական Եկեղեցու թեմական առաջնորդներ, ԵՊՀ ռեկտոր Արամ Սիմոնյանը եւ պրոֆեսորադասախոսական անձնակազմը, Մայր Աթոռի միաբաններ, ԵՊՀ ուսանողներ եւ ճեմարանականներ:

Տերունական աղոթքին եւ ՀՀ օրհներգին հաջորդեց ԵՊՀ ռեկտոր Արամ Սիմոնյանի բացման խոսքը: «...Սերն ու հավատն է, որ ազնվացնում է մեզ: ...Միայն քաջասիրտ, հայրենասեր, հավատքին նվիրված մարդն է, որ բարոյապես, ֆիզիկապես եւ հոգեպես արժանի է հավերժ ապրելու», - նշեց ԵՊՀ ռեկտորը՝ ամենքին շնորհավորելով Սրբոց Վարդանանց տոնի առիթով եւ երիտասարդներին մաղթելով իրենց սրտերում արթուն պահել Վարդանանց անմար հավատքն ու սխրանքը, վճռական լինել հայրենիքի ազատության ու հավատքի ամրապնդման մեջ:

Այնուհետեւ Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսը տոնի առիթով իր պատգամն ու օրհնությունը հղեց երիտասարդներին:

Հանդիսության ընթացքում հանդես եկան ԵՊՀ կամերային նվագախումբն ու երգչախումբը, ԵՊՀ պարային համույթը, ինչպես նաեւ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի Գեւորգյան հոգեւոր ճեմարանի երգչախումբն ու սաները: Սրբոց Վարդանանց տոնի առիթով բանախոսեց պրոֆ. Սամվել Մուրադյանը:

Միջոցառումն ավարտվեց Հայրապետի «Պահպանիչ» աղոթքով:

ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

ՎԱՐԴԱՆԱՆՑ ՏՈՆԸ ՀՆԴԿԱՍՏԱՆՈՒՄ

2011 թվականի մարտի 3-ին Սուրբ Էջմիածնի հովանու ներքո գործող Հա-յոց մարդասիրական ճեմարանում (Կալկաթա, Հնդկաստան) նշվեց Սրբոց Վարդանանց տոնը:

Հանդիսությունն սկսվեց Տերունական աղոթքով, այնուհետեւ Մարդասիրա-կանի սաները հանդես եկան Վարդանանց քաջերին նվիրված Բեմականաց-մամբ, ուր նրանք մարմնավորել էին Մեծ զորավարին ու նրա զինակիցներին: Իսկ երգչախմբի կատարմամբ հնչեցին Ավարայրի հերոսներին ձոնված շարականներ եւ երգեր:

Ձեռնարկը եզրափակեց հնդկահայոց հոգեւոր հովիվ, Հայոց մարդասիրա-կան ճեմարանի կառավարիչ Հոգեշնորհ Տ. Խորեն արդ. Հովհաննիսյանը՝ ի մասնավորի ասելով. «Հան-

դիսությունն այնքան հուզիչ էր, որ մեզ 1500 տարի հետ տարավ, դեպի Ավարայրի դաշտ, եւ մենք ականատես եղանք Վարդա-նանց հավատքին ու հայրենասիրությանը…Վարդանանց քաջերը մեզ ավան-դեցին հավատարիմ մնալ Հայ Եկեղեցուն եւ Մայր հայրենիքին»: Հայր Խորենը պատգամեց՝լինել արժանի զինվորը Սուրբ Վարդանի եւ վառ պահել Վարդանանց հիշատակը:

ՀԱՅՈՑ ՄԱՐԴԱՍԻՐԱԿԱՆ ՃԵՄԱՐԱՆԻ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

ԺՈՂՈՎ ԿԻՊՐՈՍՈՒՄ

Կիպրոսում, Այի Նապայի վանքում, մարտի 3-ին Ուղղափառ եկեղեցիների ներկայացուցիչները մեկշաբաթյա խորհրդակցություն գումարեցին՝ ուսումնասիրելու Եկեղեցիների Համաշխարհային Խորհրդի «Հավատք եւ Կարգ» հանձնախմբի ստեղծած «Եկեղեցու բնույթն ու առաքելությունը» փաստաթուղթը: Խորհրդակցության նպատակն էր համաշխարհային քննարկման նյութ դարձած եկեղեցաբանության ընկալման վերաբերյալ ներկայացնել Ուղղափառ Եկեղեցիների տեսակետը:

Հավաքը հյուրընկալվում էր Կիպրոսի Ուղղափառ Եկեղեցին: Հավաքին մասնակցում էին շուրջ 40 հոգեւորականներ, աստվածաբաններ, երիտասարդներ, ԵՀԽ անդամ Արեւելյան Ուղղափառ եւ Հին Արեւելյան Ուղղափառ եկեղեցիներից: Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի օրհնությամբ հավաքին մասնակցում էր Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի հրատարակչական բաժնի տնօրեն, «Հավատք եւ Կարգ» հանձնախմբի անդամ Տ. Նաթան եպիսկոպոս Հովհաննիսյանը:

Ժողովի բացումը կատարեց Կիպրոսի Ուղղափառ Եկեղեցու պետ Նորին Ամենապատվություն Քրիզոստոմոս արքեպիսկոպոսը: Ապա բացման խոսքով հանդես եկավ ԵՀԽ փոխատենապետ, խորհրդակցության ատենապետ Սասիմայի Գենադիոս միտրոպոլիտը:

Ողջույնի իր խոսքում ԵՀԽ գլխավոր քարտուղար Օլավ Թվեյթն անդրադարձավ Եկեղեցիների Համաշխարհային խորհրդի եկեղեցաբանական ընկալման հարցի շուրջ Ուղղափառ եկեղեցիների բերած կարեւոր ներդրմանը, խոսեց առաջիկայում Յամայկայում կայանալիք խաղաղության կոնֆերանսի մասին:

ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

ՄԿՐՏՈՒԹՅՈՒՆ «ԱՐԹԻԿ» ՔՐԵԱԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ ՀԻՄՆԱՐԿՈՒՄ

Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսի օրհնությամբ մարտի 4-ին քրեակատարողական հիմնարկների հովվությունը «Արթիկ» քրեակատարողական հիմնարկում կազմակերպեց մկրտության արարողություն:

Սա առաջին մկրտությունն էր, որ կատարվեց կալանավայրի Ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցում՝ կառուցված 2010 թվականին՝ հենց դատապարտյալների ուժերով:

21 դպրապարտյալներ մկրտվեցին քրեակատարողական հիմնարկների նորանշանակ հոգեւոր տեսուչ Տ. Ռուբեն արեղա Զարգարյանի, Հառիճավանքի վանահայր Տ. Կորյուն արեղա Առաքելյանի եւ Շիրակի թեմի հոգեւոր սպասավոր Տ. Արշեն քահանա Սարգսյանի կողմից:

«Դուք մկրտության միջոցով լվացվեցիք ոչ միայն ձեր մեղքերից, այլեւ Սուրբ Հոգու շնորհները ստացաք, որպեսզի կարողանաք ձեր հետագա կյանքը ապրել ըստ Քրիստոսի պատգամների ու պատվիրանների: Իսկ Քրիստոսի ամենամեծ պատգամը սերն էր»,- նշեց Հայր Ռուբենն իր շնորհավորական խոսքում: Հայր Սուրբը հորդորեց մկրտվածներին աղոթքի մոջոցով մշտապես Ստծո ներկայությունն ունենալ իրենց կյանքում եւ վստահություն հայտնեց, որ այս մկրտությունը օրինակ կծառայի շատերի համար, կմատնանշի դժվարությունները հաղթահարելու եւ դարձի գալու ճանապարհը:

Այս առիթով մկրտվածներին փոխանցվեցին նաեւ մկրտության խաչեր Մայր Աթոռ սուրբ Էջմիածնից:

ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

ԱՅՑ ԲՐՅՈՒՍԵԼ

Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի օրհնությամբ՝ ս.թ. մարտի 6-12-ը, ԵՀՍ Կլոր սեղան միջեկեղեցական բարեգործական կազմակերպության ներկայացուցիչները՝ Մայր Աթոռի Միջեկեղեցական հարաբերությունների բաժնի տնօրեն Տ. Հովակիմ եպիսկոպոս Մանուկյանը (Հոգաբարձուների խորհրդի անդամ), դոկտոր Կարեն Նազարյանը (գործադիր տնօրեն) եւ Ռուբինա Դեւրիկյանը (ծրագրերի պատասխանատու) աշխատանքային այցով եղան Բրյուսելում:

Այցի նպատակն էր ծանոթանալ Բրյուսելում եկեղեցական եւ Եւրոպական կազմակերպությունների գործունեությանը, Հայաստանի հետ նրանց ունեցած կապերին եւ իրականացվող ծրագրերին, Կլոր սեղան բարեգործական հիմնադրամի գործունեությունը որպես տարածաշրջանային եւ միջեկեղեցական կազմակերպություն ներկայացնել Եւրոպական կառույցների ներկայացուցիչներին եւ ուղիներ փնտրել համագործակցության հետագա զարգացման համար:

Այս նպատակով պատվիրակությունը աշխատանքային հանդիպումներ ունեցավ Եւրոպական Խորհրդի Հարավային Կովկասի եւ Արեւելյան Գործընկերության պատասխանատուների, Եւրոպական խորհրդարանի՝ արտաքին քաղաքականության եւ հարաբերությունների ներկայացուցիչների, «Եւրոդիակոնիա» կազմակերպության, Եւրոպական Եկեղեցիների կոնֆերանսի, Հայաստանի Եւրոպական ընկերներ կազմակերպության եւ մի շարք այլ եւրոպական կազմակերպությունների հետ:

Պատվիրակության անդամներին ընդունեց նաեւ Բենիլյուքս երկրների հոգեւոր հովիվ Տ. Զատիկ վարդապետ Ավետիքյանը:

Ի թիվս տարբեր պայմանավորվածությունների համաձայնություն ձեռք բերվեց Եւրոպական Եկեղեցիների կոնֆերանսի «Եկեղեցի եւ հասարակություն» հանձնախմբի հետ՝ համագործակցել «ընկերային հայեցակարգի» ստեղծման աշխատանքների եւ տարածաշրջանային երկխոսությունը խթանող ծրագրերի բնագավառներում:

ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

Ն.Ս.Օ.Տ.Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՇՆՈՐՀԱՎՈՐԱԿԱՆ ՈՒՂԵՐՁԸ ԿԱՆԱՆՑ ՏՈՆԻ ԱՌԻԹՈՎ

Կանանց օրվա առիթով Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսը շնորհավորական ուղերձ է հղել Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից, որում ասվում է.

«Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից Հայրապետական Մեր օրհնությունն ու շնորհավորանքներն ենք բերում տիկնանց եւ օրիորդաց Կանանց տոնի՝ մարտի 8-ի առիթով:

Այսօր բոլոր ասպարեզներում իրենց գործունեությամբ ու գովարժան ձեռքբերումներով, իրենց նվիրումով ու նախանձախնդրությամբ կանայք առապացնում են խնամքն ու հոգածությունը մեր կյանքում, նպաստ բերում Հայրենիքի շենացմանը, ազգային ու մշակութային մեր կյանքի առաջընթացին:

Արդարեւ, համազգային մեր կյանքում բացառիկ է լուսերամ հայ կնոջ առաքինազարդ նկարագիրը եւ հավետ օրհնյալ է նրա առաքելությունը՝ լինել խարիսխը հայ ընտանիքի, խտացումը սիրո, հավատարմության ու անձնուրաց նվիրումի:

Աղոթում ենք առ Աստված եւ մաղթում, որ գարնանաշունչ այս ուրախաբեր տոնը բերկրանք եւ ջերմություն բերի համայն տիկնանց ու օրիորդաց սրտերին, եւ Աստծո Ամենախնամ Սուրբ Աջը օրհնի եւ շնորհազարդի նրանց կյանքը բարիքներով, խնդությամբ, որպեսզի խաղաղության մեջ, առ Աստված հավատով ու հույսով, հայրենի սուրբ ավանդներով մեծացնեն, կրթեն ու դաստիարակեն մեր զավակներին՝ ի բարօրություն հայրենական կյանքի շինության ու զարգացման»:

ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

ՀԱՅ ԵԿԵՂԵՑՈՒ ԾԻՍԱԿԱՆ ՀԱՐՑԵՐԻ ՀԱՆՁՆԱԽՄԲԻ ԵՐԿՐՈՐԴ ՀԱՆԴԻՊՈՒՄԸ

Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի եւ Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոսի օրհնությամբ մարտի 7-10-ը, Անթիլիասում, իր երկրորդ հանդիպումն ունեցավ Հայ Եկեղեցու ծիսական հարցերի հանձնախումբը: Ամենայն Հայոց Կաթողիկոսության կողմից սույն հանձնախմբի կազմում են Տ. Արշակ եպիսկոպոս Խաչատրյանը (համատեղնախագահ), Տ. Միքայել եպիսկոպոս Աջապահյանը եւ Տ. Վահան ծայրագույն վարդապետ Հովհաննիսյանը: Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոսության կողմից

հանձնախմբում են Տ. Կոմիտաս արքեպիսկոպոս Օհանյանը (համապետնապետ), Տ. Գեղամ արքեպիսկոպոս Խաչերյանը եւ Տ. Գրիգոր ծայրագույն վարդապետ Չիֆթճյանը:

2010 թ. օգոստոսին Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում գումարված անդրանիկ ժողովի ընթացքում հանձնախումբը սկսեց քննարկել Հայ Եկեղեցու Սուրբ Մկրտության խորհրդին առնչվող հարցեր: Շարունակելով այդ աշխատանքները՝ հանձնախումբը ներկա հանդիպմանը հանգամանորեն քննարկեց Տ. Վահան ծայրագույն վարդապետ Հովհաննիսյանի կազմած՝ Ծիսարանների մեջ հրատարակված եւ հնագույն ձեռագրերի մեջ առկա Սուրբ Մկրտության խորհրդի բնագրերի համեմատականը: Քննարկումների արդյունքում որդեգրվեց Մկրտության միասնական բնագրի նախագիծ:

Հանձնախումբը որոշակիացրեց նաեւ Ս. Մկրտության խորհրդի արարողության հետ կապված կանոնական, խրատական, ուսուցողական եւ բարեպաշտական հարցեր: Հանդիպման երկրորդ օրվա ընթացքում նկատի առնվեցին դաստիարակչական, խրատական եւ բարեպաշտական այնպիսի հարցեր, որոնք առնչվում են մկրտվողներին հավատքի հիմնադրույթների ուսուցմանը, կնքահոր պարտականություններին եւ հարակից այլ հարցերին: Երրորդ նիստի քննության նյութը Մկրտության խորհրդի կանոնական հարցերն էին: Այս շրջագծի մեջ հանձնախումբն անդրադարձավ մկրտության խորհրդակատարության արարողակարգային, մկրտյալների պարիքային եւ մկրտության իրականացման համար առաջադրված կանոնական պայմաններին:

ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

ՆՈՐ ՆԱԽԻՋԵՎԱՆԻ ԵՎ ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ՀԱՅՈՑ ԹԵՄԻ ԱՌԱՋՆՈՐԴ Տ. ԵԶՐԱՍ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՆԵՐՍԻՍՅԱՆԻ ԱՅՑԸ ԼԱՏՎԻԱՅԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

Լատվիայի նախագահ Վալդիս Զատլերսի հրավերով Նոր Նախիջեւանի եւ Ռուսաստանի Հայոց թեմի առաջնորդ Գերաշնորհ Տ. Եզրաս եպիսկոպոս Ներսիսյանը մարտի 9-ին մեկնեց Ռիգա՝ մասնակցելու Լատվիայի եւ Հայաստանի նախագահների հետ հանդիպմանն ու պաշտոնական ճաշկերույթին:

Մինչ պաշտոնական հանդիպումը Սրբազան հայրը Ռիգայի նորակառույց Ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցում հանդիպեց հայ համայնքի հետ, մասնակցեց հոգեւոր ժողովին, որտեղ քննարկվեցին նորակառույց եկեղեցու օծման, եկեղեցու հովանու ներքո գործող կիրակնօրյա դպրոցի գործունեության եւ համայնքային կյանքի աշխուժացման հետ կապված հարցեր: Հանդիպման եկած բազմաթիվ հայ հավատացյալներին Սրբազան հայրն իր օրհնությունը բաշխեց՝ հորդորելով ապրել եկեղեցու շուրջը համախմբված, քրիստոնեական այն արժեքներով, որոնցով ապրել ու արարել են մեր նախնիները:

Երեկոյան Սրբազան հայրը մասնակցեց երկու նախագահների եւ պաշտոնական այրերի հետ հանդիպմանն ու ճաշկերույթին:

Վանքիկոսը հայ հանգամանքի հանդի Միգիտարյան ընկերության Լիսաբոնում

Հաջորդ օրը Նոր Նախիջեւանի եւ Ռուսաստանի Հայոց թեմի առաջնորդ գր. Եզրաս եպիսկոպոս Ներսիսյանը, համայնքի հոգեւոր հովիվ Տ. Խոսրով քահանա Ստեփանյանի, բարեբարների, ծիսական խորհրդի անդամների, բարեպաշտ հավատացյալների հետ Ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցում դիմավորեց ՀՀ նախագահ Սերժ Սարգսյանին եւ պատվիրակության մյուս անդամներին: Եկեղեցում համատեղ գոհաբանական աղոթք կատարվեց: Սրբազան հայրը ողջունեց նախագահին եւ նրան ուղեկցող պետական այրերին, ապա հավատացյալներին իր խոսքն ասաց նախագահ Սերժ Սարգսյանը: Խոսելով համայնքի մասին՝ նախագահը հիշեց, որ իր նախարարության տարիներին Ռիգայում եկեղեցու շինարարական աշխատաքները դեռ ավարտված չէին, իսկ այսօր, շնորհիվ ռուսահայոց առաջնորդ Տ. Եզրաս եպիսկոպոս Ներսիսյանի ջանքերի, ոչ միայն կանգուն է եկեղեցին, այլեւ ձեւավորվել է եկեղեցասեր, համերաշխ համայնք: Նախագահ Սերժ Սարգսյանը Ռիգայի Ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցուն նվիրեց քարե մանր կտորներով եւ յուղաներկով պատրաստված «Թուղթ խաչքար»:

Հյուրերին աղ ու հացով դիմավորած կիրակնօրյայի սաները արտասանեցին ու երգեցին հայրենիքի մասին երգեր: Տ. Եզրաս եպիսկոպոս Ներսիսյանը սաներին հորդորեց նախանձախնդիր լինել հայերենի իմացության եւ պահպանության գործում, սիրել Հայոց Եկեղեցին, լինել հայրենիքի եւ Ս. Էջմիածնի արժանավոր զավակը:
Մարտի 10-ին Եզրաս Սրբազանը վերադարձավ Մոսկվա:

ՆՈՐ ՆԱԽԻՋԵՎԱՆԻ ԵՒ ՌՈՒՍԱՍՏԱՆԻ
ՀԱՅՈՑ ԹԵՄԻ ՄԱՄԼՈ ԴԻՎԱՆ

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԸ ՄԵԿՆԵՑ ՖՐԱՆՍԻԱ

Մարտի 10-ին Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսը Հայրապետական մեկշաբաթյա այցով մեկնեց Ֆրանսիա:

ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

ԿԻՐԱԿՆՕՐՅԱ ՎԱՐԺԱՐԱՆՆԵՐԻ ԹԵՄԱԿԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑՉԱԿԱՆ ԺՈՂՈՎ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՒՄ

Մարտի 10-ին, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում, Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի օրհնությամբ տեղի ունեցավ կիրակնօրյա վարժարանների թեմական ներկայացուցչական ժողով՝ կազմակերպված Մայր Աթոռի Քրիստոնեական դաստիարակության կենտրոնի կողմից, համագործակցությամբ «Վորլդ Վիժն» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան գրասենյակի:

Ժողովին մասնակցեցին հոգեւորական եւ աշխարհական ներկայացուցիչներ Հայաստանի բոլոր թեմերից: Ժողովականները՝ նախագահությամբ ՔԴԿ տնօրեն Տ. Վարդան աբեղա Նավասարդյանի, քննարկեցին կիրակնօրյա վարժարանների գործունեության կանոնակարգի նախագիծը, որը պետք է նպաստի թեմերի ենթակայության ներքո գործող

շուրջ 60 կիրակնօրյա վարժարանների առավել կանոնակարգված գործունեությանը:

Կիրակնօրյա վարժարանների միասնական կրթական ծրագրի եւ գործունեության կանոնակարգի նախագիծը կքննարկվի նաեւ թեմերում եւ լրամշակվելուց հետո կներկայացվի Ամենայն Հայոց Հայրապետի հաստատմանը:

ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

12 Մարտ 2011 թուականին, Հերֆորդ քաղաքի Ս. Յովհաննէս եկեղեցւոյ մէջ տեղի ունեցաւ «Աղէտ» ցուցահանդէսի բացումը: Կազմակերպիչներն էին՝ Գերման-Հայկական Ընկերակցութիւնը եւ Հերֆորդի Աւետարանական Եկեղեցին:

Ցուցահանդէսի բացումը կատարեց թեմական խորհուրդի ատենապետ տոքթ. Սարգիս Քէհեաեան. այնուհետեւ ցուցահանդէսը ներկայացուց Եուդիթ Շէօնվիսներ: Օրուան գլխաւոր դասախօսը փրոֆ. Անդրէաս Մայերն էր (Վուփերտալի համալսարան), որ ներկայացուց Արմին Թ. Վեգներ եւ Հայկական ցեղասպանութիւն կապը:

Գեղարուեստական յայտագիրը վստահուած էր Վուփերթալէն "Trio con voce" եռեակին, երաժիշտ-երգահան Ուլրիխ Քլանի (ջութակ) ղեկավարութեամբ: Եռեակը մեկնաբանեց հայկական երաժշտութենէն (Կոմիտաս, Գայանէ Չեբոդարեան եւ Արմինէ Ղուլոյեան) ընտրուած կտորներ :

Արմին Թ. Վեգների Հայկական ցեղասպանութեան նուիրուած լուսանկարներու այս շրջուն ցուցահանդէսը առաջին անգամ տեղի ունեցաւ Սոլինկեն քաղաքի թանգարանին մէջ. այնուհետեւ ներկայացուեցաւ Պեռլինի, Վինթերպերգի եւ Քէօլնի մէջ:

ԴԻՒԱՆ ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆԻ
ՀԱՅՈՑ ԳԵՐՄԱՆԻՈՅ

ԵՀԽ «ՀԱՎԱՏ եւ ԿԱՐԳ» ՀԱՆՁՆԱԽՄԲԻ ԱՆԴԱՄՆԵՐԻ ՀԱՆԴԻՊՈՒՄԸ ՕՀԱՅՈՅՈՒՄ

Մարտի 15-21-ը, Դելավարի համալսարանում (Օհայո, ԱՄՆ) տեղի ունեցաւ Եկեղեցիների Համաշխարհային Խորհրդի «Հավատք եւ Կարգ» հանձնախմբի գործադիր վարչության անդամների հերթական հանդիպումը: Հանդիպմանը մասնակցում էին շուրջ 10 եկեղեցիների ներկայացուցիչներ չորս մայրցամաքներից: Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի օրհնությամբ ժողովին Հայաստանեայց Առաքելական Սուրբ Եկեղեցին ներկայացրեց Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի հրատարակչական բաժնի տնօրեն Տ. Նաթան եպիսկոպոս Հովհաննիսյանը:

Հանդիպմանը Ուղղափառ, Կաթոլիկ եւ Բողոքական եկեղեցիների տեսանկյունից քննության առնվեց «Եկեղեցու բնույթը եւ առաքելությունը» փաստաթուղթը, որը կազմվել ԵՀԽ նախաձեռնությամբ եւ փորձում է արտահայտել է ԵՀԽ անդամ Եկեղեցիների ընդհանուր տեսակետները Եկեղեցու բնույթի մասին՝ պահպանելով, այդուհանդերձ, նրանց տարբերությունները:

ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

ՀԱՅ ԵԿԵՂԵՑՈՒ ԵԿԵՂԵՑԱՍԵՐ ԵՐԻՏԱՍԱՐԴԱՑ ՀԱՄԱԶԳԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԳՐԱՍԵՆՅԱԿԻ ԱՆԴԱՄՆԵՐԻ ԺՈՂՈՎ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՒՄ

Մարտի 17-19-ը Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում տեղի ունեցավ Հայ Եկեղեցու Եկեղեցասեր երիտասարդաց համազգային կազմակերպության Կենտրոնական գրասենյակի անդամների ժողովը՝ նախագահությամբ կազմակերպության պատասխանատու, ԱՄՆ Արեւմտյան հայոց թեմի առաջնորդ Տ. Հովնան արքեպիսկոպոս Տերտերյանի եւ մասնակցությամբ կազմակերպության ատենապետ Կարեն Պետրոսյանի ու հոգեւոր հովիվ Տ. Եղիշե վարդապետ Ավետիսյանի:

Եռօրյա ժողովի նպատակն էր նախապատրաստել կազմակերպության երկրորդ պատգամավորական ժողովը, որ գումարվելու է Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում ս.թ. հուլիսի 7-10-ը:

Առաջին օրը ժողովականները քննարկեցին մի շարք հարցեր, որոնք վերաբերում էին Եկեղեցասեր երիտասարդաց համազգային կազմակերպության կանոնադրության նախագծին, առաջիկա պատգամավորական ժողովի օրակարգին, պատվիրակների եւ Կենտրոնական խորհրդի ընտրության կարգին, պատգամավորական ժողովի պատվիրակների մասնակցությանը: Որոշվեց պատգամավորական ժողովի ավարտին կազմակերպել ուխտագնացություններ Հայաստանի տարբեր սրբավայրեր:

Ժողովին ներկայացվեց նաեւ երիտասարդաց կազմակերպության Կենտրոնական գրասենյակի գործունեության հաշվետվությունը: Քննարկումների արդյունքում ընդունվեց երկամյա ծրագիր: Իբրեւ գործունեության ուղենիշ այն կներկայացվի պատգամավորական ժողովի, ապա եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսի վերջնական հաստատմանը: Որդեգրվեց կազմակերպության գործունեության համազգային եւ միջթեմական ուղղությունների փաստաթուղթը: Կազմակերպության գործունեության արդյունավետ լուսաբանման համար կարեւոր նկատվեց նաեւ համացանցային պաշտոնական կայքէջի հիմնումը:

Ժողովն ամփոփվեց Տ. Հովնան արքեպիսկոպոս Տերտերյանի օրհնության խոսքով: Հովնան Սրբազանը, մեծապես կարեւորելով երիտասարդների դաստիարակությունը ազգային-հոգեւոր արժեքներով, նրանց ներգրավումը Եկեղեցասեր երիտասարդաց համազգային կազմակերպության եւ Հայոց Եկեղեցում գործող երիտասարդական տարբեր

միությունների շարքերում, հորդորեց զորեղ հավատքով, նվիրումով ու նախանձախնդրությամբ հետամուտ լինել կազմակերպության աշխատանքներին եւ առաջիկա պատգամավորական ժողովի արդյունավետ կազմակերպմանը:

ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

ԳԵՐԱԳՈՒՅՆ ՀՈԳԵՒՈՐ ԽՈՐՀՐԴԻ ԺՈՂՈՎ ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆՈՒՄ

Մարտի 17-19-ը, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում, բարձր նախագահությամբ Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսի, գումարվեց Գերագույն հոգեւոր խորհրդի հերթական ժողովը ընդլայնված կազմով:

Ժողովի սկզբում ժողովականները աղոթեցին Մայր Աթոռի վաստակաշատ միաբան լուսահոգի Տ. Հուսիկ արքեպիսկոպոս Սանթուրյանի հոգու հանգստության համար: Այնուհետեւ ԳՀԽ անդամներին իր գնահատականն ու օրհնությունը բերեց Ամենայն Հայոց Կաթողիկոսը՝ բարի արդյունավորում մաղթելով ժողովի աշխատանքներին: Նորին Սրբությունը ողջունեց նաեւ Կոստանդնուպոլսի հայոց պատրիարքությունից պատրիարքական ընդհանուր փոխանորդ Տ. Արամ արքեպիսկոպոս Աթեշյանի ներկայությունը:

Ժողովի նիստերն ատենապետեցին ԱՄՆ Արեւելյան հայոց թեմի առաջնորդ Տ. Խաժակ արքեպիսկոպոս Պարսամյանը եւ ԱՄՆ Արեւմտյան հայոց թեմի առաջնորդ Տ. Հովնան արքեպիսկոպոս Տերտերյանը:

ԳՀԽ անդամներին ներկայացվեցին Մայր Աթոռ Ս. Էջմիածնի 2010թ. գործունեության տեղեկագիրը եւ ֆինանսական հաշվետվությունը: Այնուհետեւ ժողովի օրակարգում քննության առնվեցին մի շարք հարցեր, որոնք վերաբերում էին Մայր Աթոռ-նվիրապետական աթոռներ, Եկեղեցի-պետություն հարաբերություններին, Ամենայն Հայոց Կաթողիկոսի հովվապետական եւ միջեկեղեցական այցերին, ներեկեղեցական խնդիրներին:

Ըստ այդմ, ժողովականների ուշադրությանը հանձնվեցին Նվիրապետական Աթոռներին եւ Մայր Աթոռի հետ փոխհարաբերություններին վերաբերող տեղեկություններ: Ամենայն Հայոց Կաթողիկոսության եւ Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոսության կանոնական եւ ծիսական հանձնախմբերի կատարած աշխատանքների մասին Ժողովականներին զեկուցեցին հանձնախմբերի համապատասխանաստեղծ ԱՄՆ Արեւելյան հայոց թեմի առաջնորդ Տ. Խաժակ արքեպիսկոպոս Պարսամյանը եւ Մայր Աթոռի դիվանապետ Տ. Արշակ եպիսկոպոս Խաչատրյանը: Գերագույն հոգեւոր խորհուրդը գոհունակությամբ ընդունեց զեկույցները եւ հորդորեց շարունակել աշխատանքները՝ ի նպաստ Հայ Եկեղեցու կյանքում առկա կանոնական եւ ծիսական խնդիրների լուծման եւ հաղթահարման:

Երուսաղեմի Հայոց Պատրիարքության միաբանական ընդհանուր ժողովի արդյունքների մասին զեկույցներ ներկայացրեցին Տ. Խաժակ արքեպիսկոպոս Պարսամյանը եւ Արարատյան Հայրապետական թեմի առաջնորդական փոխանորդ Տ. Նավասարդ արքեպիսկոպոս Կճոյանը: Տեղեկացվեց, որ ժողովում ընտրված հանձնախումբն առաջիկային

Գերագույն դատարանի նախագահ Խաչիկ Ամիրյանը դատավորների անդամակցությամբ

Երուսաղեմի Հայոց Պատրիարք Տ. Թորգոմ արքեպիսկոպոս Մանուկյանին կներկայացնի պատրիարքության կանոնադրության մեջ աթոռակից պատրիարքի վերաբերյալ փոփոխությունների համապատասխան նախագիծը:

Կոստանդնուպոլսի հայոց պատրիարքության ընթացիկ հարցերի վերաբերյալ զեկուցեց Կ.Պոլսի պատրիարքական ընդհանուր փոխանորդ Տ. Արամ արքեպիսկոպոս Աթեշյանը: Արամ Սրբազանը ներկայացրեց նաեւ պատրիարքության հիմնադրման 550-ամյակի առիթով ծրագրված միջոցառումները: Գնահատանքով ընդունելով զեկույցը՝ Գերագույն հոգեւոր խորհուրդը որոշեց Հայրենիքում եւս կազմակերպել հոբելյանական տարեթվի նշումը:

Ժողովի ընթացքում անդրադարձ կատարվեց նաեւ տարբեր ներեկեղեցական հարցերի: Շվեյցարիայի հայոց թեմում առկա խնդիրների մասին զեկուցեցին Արեւմտյան Եւրոպայի Հայրապետական պատվիրակ Տ. Նորվան արքեպիսկոպոս Զաքարյանը եւ Տ. Եզնիկ արքեպիսկոպոս Պետրոսյանը: Շվեյցարիայի հայոց թեմը հռչակվել է Վազգեն Ա Ամենայն Հայոց Կաթողիկոսի կողմից դեռեւս 1992 թ. եւ թեմական առաջնորդ է նշանակվել Տ. Վիգեն եպիսկոպոս Այքազյանը: Հայրապետական տնօրինության համար հիմք են ծառայել տեղում գործող ծուխերը եւ Շվեյցարիայում, ուր գործում է Եկեղեցիների Համաշխարհային Խորհուրդը եւ այլ էկումենիկ կառույցներ, Հայ Եկեղեցու ներկայացուցչության մակարդակի բարձրացման անհրաժեշտությունը: Քննարկումների արդյունքում Գերագույն հոգեւոր խորհուրդը որոշեց Շվեյցարիայի հայոց թեմում նշանակել առաջնորդական տեղապահ ի դեմս Մայր Աթոռի փոխդիվանապետ Հոգեշնորհ Տ. Մեսրոպ աբեղա Պարսամյանի՝ ձեռնամուխ լինելու Շվեյցարիայում թեմական կյանքի վերակազմակերպմանը եւ միաժամանակ ծառայելու իբրեւ Ժնեւի հայ համայնքի հոգեւոր հովիվ: Որոշվեց նաեւ Ժնեւի հոգեւոր հովիվ Տ. Աբել քահանա Մանուկյանին այլ ծառայության համար հրավիրել Մայր Աթոռ Ս. Էջմիածին:

Ժողովին անդրադարձ կատարվեց Հայ Եկեղեցու կանոնադրության մշակման աշխատանքներին, ինչպես նաեւ թեմերի կանոնադրություններում Թեմական-ծխական կանոնադրության ուղենշային փաստաթղթի պահանջների ներդրման գործընթացի արդյունքներին:

Տ. Արարատ եպիսկոպոս Գալթակճյանը ներկայացրեց Ամենայն Հայոց Կաթողիկոսի՝ մայիսի 7-26-ը Հարավային Ամերիկայի թեմեր կատարելիք այցի կազմակերպական մանրամասները: Անդրադարձ կատարվեց նաեւ Վրաց Եկեղեցի եւ Վիրահայոց թեմ Վեհափառ Հայրապետի կատարելիք միջեկեղեցական եւ հովվապետական այցին, որը նախատեսված է իրականացնել առաջիկա հունիս ամսին: Մայր Աթոռի միջեկեղեցական հարաբերությունների գրասենյակի տնօրեն Տ. Հովակիմ եպիսկոպոս Մանուկյանը եւ Վիրահայոց թեմի առաջնորդ Տ. Վազգեն եպիսկոպոս Միրզախանյանը ԳՀԽ անդամներին ներկայացրեցին այցի ծրագիրը:

Հայ Եկեղեցու Եկեղեցասեր երիտասարդաց համազգային կազմակերպության գործունեության հաշվետվությունը ժողովականներին ներկայացրեց կազմակերպության պատասխանատու Տ. Հովնան արքեպիսկոպոս Տերտերյանը: Տեղեկացվեց, որ հուլիսի 7-10-ը Մայր Աթոռում կգումարվի կազմակերպության երկրորդ պատգամավորական ժողո-

վը: Գերագույն հոգեւոր խորհուրդը գնահատանք հայտնեց կատարված աշխատանքների համար՝ մեծապես կարեւորելով երիտասարդների քրիստոնեական դաստիարակությանն ուղղված ձեռնարկները:

Գերագույն հոգեւոր խորհրդում ուրախությամբ արձանագրվեց, որ ընթացիկ տարում բոլորում է Ամենայն Հայոց Հայրապետի ծննդյան 60-րդ տարեդարձը, որը որոշվեց նշել նոյեմբեր ամսին, Նորին Սրբության գահակալության օրը:

Գերագույն հոգեւոր խորհուրդը որոշեց ձեռնամուխ լինել Հայ Եկեղեցու հոգեւոր սպասավորների պատրաստության հիմնադրամի ստեղծմանը, որը պիտի ծառայի եկեղեցականաց նոր սերնդի կրթության եւ հոգեւորականների ուսումնական ու դաստիարակչական առավել արդյունավետ ծրագրերի իրականացմանը: Հիմնադրամի հաստատման աշխատանքների կազմակերպման նպատակով ձեւավորվեց հանձնախումբ:

Ժողովին ներկայացվեցին նաեւ Հայ Եկեղեցու թեմական առաջնորդների հաշվետու զեկույցներ: ԳՀԽ անդամներն իրենց նկատառումները փոխանցեցին ներկայացված տեղեկագրերի վերաբերյալ եւ գոհունակություն հայտնեցին թեմերի հոգեւոր-եկեղեցական կյանքում արձանագրված հաջողությունների առիթով:

ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

ՎԱՐԴԱՊԵՏԱԿԱՆ ԹԵԶԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆՈՒՄ

Մարտի 24-ին, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի Գեւորգյան հոգեւոր ճեմարանում տեղի ունեցավ վարդապետական թեզի բանավոր պաշտպանություն:

Մասնավոր վարդապետության աստիճանի համար թեզ էր ներկայացրել Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի միաբան Տ. Մեսրոպ աբեղա Պարսամյանը՝ «Լինել Աստված». մարդու աստվածացման եռաստիճան ճանապարհն ըստ Սուրբ Ներսես Շնորհալու վարդապետության» թեմայով:

Նախնական քննությունից հետո թեզն արտոնվել էր բանավոր պաշտպանության հանձնաժողովի կողմից, որի կազմում էին Մայր Աթոռի դիվանապետ Տ. Արշակ եպիսկոպոս Խաչատրյանն իբրեւ նախագահ, ԵՊՀ Աստվածաբանության ֆակուլտետի դեկան Տ. Անուշավան եպիսկոպոս Ժամկոչյանը, Արագածոտնի թեմի առաջնորդ Տ. Մկրտիչ եպիսկոպոս Պռոշյանը:

Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսի օրհնությամբ առաջիկային Հայր Մեսրոպը Օշականի Ս. Մեսրոպ Մաշտոց եկեղեցում տվչության հատուկ արարողությամբ կստանա մասնավոր վարդապետության աստիճան:

ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

ՄԱՄՆԱՎՈՐ ՎԱՐԴԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏՎՉՈՒԹՅՈՒՆ ՕՇԱԿԱՆՈՒՄ

Մարտի 26-ին, Օշականի Սուրբ Մեսրոպ Մաշտոց եկեղեցում տեղի ունեցավ մասնավոր վարդապետական աստիճանի տվչության արարողություն: Ձեռամբ Երեւանի Ս. Գրիգոր Լուսավորիչ Մայր եկեղեցու հոգեւոր տեսուչ Տ. Անուշավան եպիսկոպոս Ժամկոչյանի Մայր Աթոռի միաբան, փոխդիվանապետ Տ. Մեսրոպ աբեղա Պարսամյանը, որ օրեր առաջ պաշտպանել էր իր վարդապետական թեզը, ստացավ մասնավոր վարդապետական չորս աստիճանները:

Եկեղեցու դավանանքի հրապարակավ խոստովանությանը հաջորդած սուրբգրային ընթերցվածներից ու աղոթքներից հետո Անուշավան Սրբազանը Հայր Սուրբին շնորհեց վարդապետական իշխանության գավազան: Արարողության ավարտին Հայր Սուրբին տվչության առիթով շնորհավորեց Կանադայի հայոց թեմի առաջնորդ Տ. Բագրատ եպիսկոպոս Գալստանյանը, ապա անդրադարձավ վարդապետների կոչմանը եւ կարեւոր առաքելությանը ժողովրդի կյանքում: Բագրատ Սրբազանը նաեւ մաղթեց Հայր Սուրբին, որ ինչ էլ որ պատահի իր կյանքում, երբեք նրա մեջ չցամաքի ու չպակասի սերը, եւ շարունակի իր հոգեւոր սպասավորությունն իբրեւ վարդապետ եւ ուսուցիչ:

Նույն օրը, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսը, նորընծա վարդապետին բերելով իր հայրական օրհնությունն ու բարեմաղթանքները, նրան շնորհեց վարդապետական լանջախաչ:

Ապրիլի 1-ից Տ. Մեսրոպ վարդապետ Պարսամյանը կանցնի իր նոր պարտականությունների կատարմանը: Ս. թ. մարտի 17-19-ը Մայր Աթոռում գումարված Գերագույն հոգեւոր խորհրդի որոշմամբ Հայր Մեսրոպը նշանակվեց Շվեյցարիայի հայոց թեմի առաջնորդական տեղապահ եւ Ժնեւի հայ համայնքի հոգեւոր հովիվ: Դեռեւս 1992 թ. Վազգեն Ա Ամենայն Հայոց Կաթողիկոսի կողմից հաստատված Շվեյցարիայի հայոց թեմում նորանշանակ առաջնորդական տեղապահը ձեռնամուխ է լինելու թեմական կյանքի վերակազմակերպմանը:

ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

26 Մարտ 2011 Շաբաթ օրը առաջնորդ Գարեգին Սրբազանը իր հետն ունենալով Տ. Գնել քհնյ. Գաբրիէլեանը՝ մասնակցեցաւ Տէսսաուի մէջ տեղի ունեցող «Միջեկեղեցական Օր»-ին, որը կազմակերպուած էր Ջաքսէն-Անհալթ նահանգի միջեկեղեցական խորհուրդի (ACK) կողմէ: Տէսսաուի Սուրբ Գէորգ անուն բողոքական եկեղեցւոյ մէջ տեղի ունեցաւ միջեկեղեցական արարողութիւն մը, որու ընթացքին Հայ Առաքելական եկեղեցին

հանդիսաւորապէս ընդունուեցաւ Զաքսէն-Անհալթի Միջեկեղեցական խորհուրդին անդամ: Ապա Սրբազան Հայրը քարոզեց՝ նիւթ ունենալով Յովհաննէս Մկրտիչի Լոյսի, այսինքն Յիսուս Քրիստոսի մասին վկայութիւնը: Սրբազան Հայրը նշեց նաեւ միջեկեղեցական յարաբերութիւններու սերտացման կարեւորութիւնը յիշեցնելով Քրիստոսի խօսքը. «Որպէսզի բոլորն ալ մէկ ըլլան, ինչպէս դուն՝ Հա՛յր՝ իմ մէջս, ու ես՝ քու մէջդ. որ անո՛նք ալ մէկ ըլլան մեր մէջ, որպէսզի աշխարհը հաւատայ թէ դո՛ւն ղրկեցիր զիս»: Յով. 17, 21:

ԴԻՒԱՆ ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆԻ
ՀԱՅՈՑ ԳԵՐՄԱՆԻՈՅ

ԿԱՏԱՐՎԵՑ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԲԵՐՔԱՇԱՏ ԳՅՈՒՂԻ ԵԿԵՂԵՑՈՒ ՀԻՄՆԱՐԿԵՔ

Ս/թ մարտի 28-ին Արմավիրի մարզի Բերքաշատ գյուղում նախագահությամբ Արմավիրի թեմի առաջնորդ Տ. Սիոն եպիսկոպոս Ադամյանի, մասնակցությամբ Ուկրաինայի հայոց թեմի առաջնորդ Տ. Գրիգորիս արքեպիսկոպոս Բունիաթյանի եւ Արմավիրի թեմի հոգեւոր դասի կատարվեց եկեղեցու հիմնարկեքի արարողությունը:

Գինով, ջրով լվացվեցին նախապես ընտրված 16 վեմ քարերը, որոնց համար ընտրվել էին 16 կնքահայրեր: Այդ պատասխանատու պարտականությունը սիրով ստանձնել էին Արմավիրի մարզպետ Աշոտ Ղահրամանյանը, եկեղեցու բարերար Խաչատուր Խաչատրյանը, համայնքապետ Հարություն Չվչյանը, բարերարի որդիները եւ համագյուղացիներ:

Գյուղը եկեղեցի չի ունեցել, եւ տարիներ շարունակ գյուղի բնակիչներն իրենց աղոթքը առ Աստված բարձրացնելու եւ հոգեւորականի խոսքը լսելու համար այցելել են տարածաշրջանի գյուղերում գտնվող եկեղեցիներ: Եկեղեցու բարերար Խաչատուր Խաչատրյանը, երկար տարիներ բնակվելով Կիեւում, նախաձեռնեց հայրենի գյուղում կառուցել եկեղեցի, որը կծառայի գյուղացիներին եւ կնպաստի գյուղի հոգեւոր վերազարթոնքին:

Եկեղեցու ճարտարապետն է Խաչիկ Դանիելյանը, որ նաեւ Մեծամոր քաղաքի Ս. Ղազար եկեղեցու նախագծողն է: Եկեղեցին կառուցվում է գյուղի կենտրոնում: Այն լինելու է տուֆակերտ, գմբեթավոր եկեղեցի, 11.2X11.2 մետր չափերով, 16.4 մետր բարձրությամբ, միախորան, խորանի երկու կողմերում եռանկյունաձեւ ավանդատներով, արեւմուտքում կցված զանգակատնով: Կառուցման աշխատանքները նախատեսվում է ավարտել 2012 թվականի գարնանը:

ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ԹԵՄԻ

ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Վոլոկոլամսկի միտրոպոլիտ Իլարիոն Ալֆեեւը հանդիպեց Մոսկվայի հայ եկեղեցասեր երիտասարդների հետ:

Նոր Նախիջեւանի եւ Ռուսաստանի Հայոց թեմի առաջնորդ Գերաշնորհ Տ. Եզրաս եպիսկոպոս Ներսիսյանի հրավերով Մոսկվայի Պատրիարքարանի արտաքին հարաբերությունների բաժնի նախագահ, Վոլոկոլամսկի միտրոպոլիտ Իլարիոն Ալֆեեւը «Հայորդյաց տուն» հայեցի դաստիարակության կենտրոնում հանդիպեց «Նուռ» եկեղեցասեր երիտասարդաց միության անդամների հետ:

Երկու առաջնորդների հետ հանդիպումը, նվիրված միջքրիստոնեական հարաբերությունների առաջընթացին, սկսվեց տերունական աղոթքով, որից հետո հյուրերին ողջույնի խոսք ասաց Ռուսահայոց առաջնորդ Տ. Եզրաս եպիսկոպոս Ներսիսյանը. «Անչափ ուրախ ենք, Սրբազան հայր, որ դուք այցելեցիք մեր տուն: Սա նաեւ ձեր տունն է: Շնորհակալ ենք մեր եկեղեցու եւ համայնքի նկատմամբ տածած սիրո, ուշադրության եւ ջերմ եղբայրական հարաբերությունների համար: Այսօր առաջին անգամ մեր հոգեւոր կրթական կենտրոնում հյուրընկալում ենք Ռուս Ուղղափառ Եկեղեցու բարձրաստիճան ներկայացուցչի՝ Մոսկվայի Պատրիարքարանի արտաքին հարաբերությունների բաժնի նախագահ, Վոլոկոլամսկի միտրոպոլիտ Իլարիոնին: Ձեր այցն ուրախալի իրադարձություն է մեր համայնքի եւ եկեղեցու համար, որը ոչ միայն վկայում է ջերմ եւ անկեղծ եղբայրական հարաբերությունների մասին, այլեւ հիշեցնում, որ պետք է շարունակել ապրել հոգեւոր արժեքներով, որոնք պահպանել եւ մեզ ժառանգություն են թողել մեր նախնիները: Այսպիսի փոխադարձ այցելությունները, շփումները ամրապնդում են եւ նպաստում եղբայրական հոգեւոր հարաբերությունների զարգացմանը հանուն Աստծո փառքի եւ բոլորիս բարօրության»:

Այնուհետեւ միտրոպոլիտ Իլարիոն Ալֆեեւը ներկաներին փոխանցեց Մոսկվայի եւ Համայն Ռուսիո Պատրիարք Կիրիլ Ա-ի օրհնությունն ու ողջույնը: «Դուք գիտեք, թե ինչ սիրով է վերաբերվում Կիրիլ Պատրիարքը Հայաստանին, հայ ժողովրդին եւ Հայ Առաքելական Եկեղեցուն,- ասաց միտրոպոլիտ Իլարիոնը: -Նա եղել է Հայաստանում մինչ պատրիարք լինելը եւ ընտրվելուց հետո եւս: Ես հուսով եմ, որ դեռ շատ անգամներ Կիրիլ Պատրիարքը կայցելի ձեր գեղեցիկ, բայց եւ բազում ցավեր տեսած երկիր»: Այնուհետեւ միտրոպոլիտ Իլարիոնը պատմեց Հայաստան կատարած իր մի քանի այցելության տպավորությունների մասին: «Ինձ համար շատ հարազատ ու թանկ է Հայաստանը:Այն, ինչ ես տեսել եմ Հայաստանում մեծ տպավորություն է գործել ինձ վրա եւ միշտ կմնա իմ սրտում: Շատ տառապանքներ է տեսել հայ ժողովուրդը եւ տառապել է հատկապես իր քրիստոնեական հավատքի համար: Եւ չնայած բազում տառապանքներին, դարերի ընթացքում, հայ ժողովուրդը ամուր է պահել եւ շարունակում է պահպանել իր հավատքը»,-ասաց Սրբազան հայրը:

Վոլոկոլամսկի միտրոպոլիտ Իլարիոնը խոսեց նաեւ Ռուս Ուղղափառ եւ Հայ Առաքելական Եկեղեցիների դարավոր ամուր կապի մասին, միաժամանակ նշելով, որ մեր եկեղեցիների միջեւ գոյություն ունի տարակարծություն, որը սկիզբ է առել 451 թվականին եւ

մինչ օրս հաղթահարված չէ: «Չնայած աստվածաբանական տարաձայնությանը, որն այսօր քննարկում են Ուղղափառ եկեղեցիները եւ Արեւելյան Հին Ուղղափառ եկեղեցիները, -ասաց Սրբազան հայրը,- մենք միմյանց նկատմամբ դրամադրված ենք բարյացակամ, որը բազմիցս փաստել ենք գործով մեր համատեղ պատմության ընթացքում: Եւ պատահական չէ, որ խորհրդային ատվածմերժության տարիներից հետո Ռուս Ուղղափառ եւ Հայ Առաքելական եկեղեցիները զարթոնք են ապրում, եւ մեր եկեղեցիների հոգեւոր առաջնորդները պարբերաբար հանդիպում են, շփվում, օգնում միմյանց լուծելու այն խնդիրները, որոնք ծառացած են այսօր մեր առաջ»: Միտրոպոլիտ Իլարիոնը հիշեց նաեւ, թե ինչ կարեւոր դերակատարություն է ունեցել Ռուս Ուղղափառ Եկեղեցին 1990-ականների սկզբին Լեռնային Ղարաբաղի առնչությամբ երկկողմանի լարված պայմաններում Ամենայն Հայոց Կաթողիկոսի եւ Ադրբեջանի հոգեւոր առաջնորդի հանդիպումները կազմակերպելու գործում: «Հոգեւոր առաջնորդները արել են հնարավոր ամեն ինչ, որպեսզի լարվածությունը թուլանա, խաղաղ բնակիչների շրջանում զոհեր քիչ լինեն, որպեսզի ձեռք բերվի խաղաղություն, որը մարդկանց ապրելու, աշխատելու հնարավորություն կտար, նաեւ հավատալու, ինչպես այդ արել են դարերի ընթացքում»:

Միտրոպոլիտ Իլարիոնը պատասխանեց նաեւ երիտասարդների հարցերին, որոնք վերաբերում էին երկու եկեղեցիների հարաբերությունների սերտացմանը, առկա դավանաբանական տարակարծություններին, եկեղեցու հովանու ներքո որբ երեխաներին աջակցություն ցուցաբերելուն, աղանդավորների դեմ պայքարի ձեւերին եւ այլն:

Հանդիպման ավարտին Նոր Նախիջեւանի եւ Ռուսաստանի Հայոց թեմի առաջնորդ Տ. Եզրաս եպիսկոպոս Ներսիսյանը Մոսկվայի Պատրիարքարանի արտաքին հարաբերությունների բաժնի նախագահ, Վոլոկոլամսկի միտրոպոլիտ Իլարիոնին նվիրեց «Գրիգոր Նարեկացին եւ հոգեւոր մշակույթը միջնադարում» գիրքը եւ Ս. Հարության տոնի նախաշեմին՝ զատկական ձու, որի ներսում ռուսական եկեղեցու քանդակն էր: Միտրոպոլիտ Իլարիոնը կենտրոնի գրադարանին նվիրեց իր հեղինակած «Ուղղափառություն» երկհատոր գիրքը:

ՆՈՐ ՆԱԽԻՋԵՎԱՆԻ ԵՒ ՌՈՒՍԱՍՏԱՆԻ
ՀԱՅՈՑ ԹԵՄԻ ՄԱՄԼՈ ԴԻՎԱՆ

ՀԱՆԴԻՊՈՒՄՆԵՐ ՎԱՐՇԱՎԱՅՈՒՄ

Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի միաբան Տ. Տաճատ արեղա Ծատուրյանը, որ Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի օրհնությամբ իր բարձրագույն ուսումն է շարունակում Վարշավայի համալսարանում եւ միաժամանակ հոգում Հայ Առաքելական Եկեղեցու համայնքի հոգեւոր կարիքները՝ Սուրբ պատարագների մատուցմամբ, վերջերս հանդիպումներ է ունեցել Վարշավայի եւ Համայն Լեհաստանի Ուղղափառ Միտրոպոլիտ Սավայի, Վարշավայի Արքեպիսկոպոս Կարդինալ Կաժիմիեժ Նիչի եւ Կրակովի Արքեպիսկոպոս Կարդինալ Ստանիսլավ Ջիվիշի հետ եւ փոխանցել նրանց Ամենայն Հայոց Հայրապետի ողջույնները: Բարձրաստիճան հոգեւորականների հետ Հայր Սուրբը զրուցել է

Հայ-Կաթոլիկ եւ Հայ-Ուղղափառ Եկեղեցիների միջեւ գոյություն ունեցող եղբայրական հարաբերությունների, ինչպես նաեւ Լեհաստանում բնակվող առաքելական ու կաթոլիկ հայկական համայնքների մասին:

Բարձրաստիճան հոգեւորականներն իրենց շնորհակալությունն են հայտնել Վեհափառ Հայրապետի ողջույնների եւ Սուրբ Էջմիածնի Մայր Տաճարը խորհրդանշող նվերների համար: Փոխադարձաբար Հայր Սուրբը Վեհափառ Հայրապետի եւ անձամբ իր անունից երախտագիտություն է հայտնել Կաթոլիկ եւ Ուղղափառ Եկեղեցիների առաջնորդներին՝ Լեհաստանում բնակվող հայորդիների հանդեպ դրսեւորվող ազնիվ վերաբերմունքի, ինչպես նաեւ Հայ Եկեղեցու հավատավոր զավակների համար Սուրբ Պատարագ մատուցելու նպատակով եկեղեցու տրամադրման գործում նրանց ցուցաբերած աջակցության եւ օգտակարության համար:

ՎԱՐՉԱՎԱՅԻ ՀԱՅՈՑ
ՀՈՎՎՈՒԹՅՈՒՆ

ՆՈՐ ՆՇԱՆԱԿՈՒՄ

Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի տնօրինությամբ Տ. Մեղրակ քահանա Ազնավուրյանը, ազատվելով Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում սպանձնած պարտականություններից, մարտի 20-ից հոգեւոր իր ծառայությունը կշարունակի Հարավային Ռուսաստանի Հայոց թեմում:

ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

ԿԱՐԳԱԼՈՒՅԾ Է ՀՌՉԱԿՎԵԼ Տ. ԿՏՐԻՃ ՔԱՀԱՆԱ ԴԵՒԵՋՅԱՆԸ

Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի մարտի 4-ի Հայրապետական տնօրինությամբ կարգալույծ է հռչակվել Տ. Կտրիճ քահանա Դեւեջյանը՝ հիմք ընդունելով նրա՝ ամուսնալուծված լինելու պատճառով եկեղեցական ծառայությունից հրաժարվելու մասին դիմումը:

Կարգալույծ հռչակված հոգեւորականն այսուհետ կդասվի աշխարհականների շարքը եւ կկոչվի ավագանի անունով՝ Արմեն Դեւեջյան:

ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

ԿԱՐԳԱԼՈՒՅԾ ՀՌՉԱԿՎԵԼ
Տ. ՍԱՐԳԻՍ ՔԱՀԱՆԱ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԸ

Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի մարտի 5-ի Հայրապետական տնօրինությամբ կարգալույծ է հռչակվել Բուլղարիայի հայոց թեմի Վառնայի հոգեւոր հովիվ Տ. Սարգիս քահանա Հովհաննիսյանը՝ հոգեւորականին անհարիր վարքագծի համար:

Կարգալույծ հռչակված հոգեւորականն այսուհետ կդասվի աշխարհականների շարքը եւ կկոչվի ավագանի անունով՝ Արթուր Հովհաննիսյան:

ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

ՄԱՀԱԽՕՍԱԿԱՆ

ՏԵՐ ՀԱՐՈՒԹՅՈՒՆ ԱՎԱԳ ՔԱՀԱՆԱ ՏԵՐՏԵՐՅԱՆ

Իսկ դուք, Տիրոջ քահանաներ պիտի կոչուէք, մեր
Աստծու պաշտօնեաներ պիտի անուանուէք...
(Եսայի ԿԱ 6)

Սույն թվականի մարտի 15-ին, կյանքի 100-րդ տարում վախճանվեց արժանապատիվ Տեր Հարություն ավագ քահանա Տերտերյանը:

Հանգուցյալը ծնվել է 1912 թվականի մարտին՝ Իրանի Փերիա գավառի Հազարջրիր գյուղում: Հաշվի չառնելով ժամանակի դժվարությունները ծնողները դեռևս մանուկ հասակից հոգացել են նրա ուման մասին. վեց տարեկան հասակից հաճախել է տեղի դպրոցը, այնուհետև ըստ դասարանների հերթականության՝ սովորել Խոյգյան, Բոլորան և պարսկական Աղջա գյուղի դպրոցներում: Ուսումնառության ընթացքում ցուցաբերած առաջադիմությունը և անթաքույց սերը դեպի հայ գիրն ու գրականությունն ի վերջո աննկատ չի մնում համագյուղացիներից: Հենց վերջիններիս ցանկությամբ և պնդմամբ 1928 թվականից մինչև 1945 թ. ուսուցչություն է արել իրենց գյուղում: Սակայն որպես Պարսկաստանի քաղաքացի իր պարտքն է կատարել պետության նկատմամբ՝ 1937-1939 թթ. բարեխղճորեն ծառայելով պարսկական բանակում: Բանակից վերադառնալուց հետո նրա ընդմիջված ուսուցչական գործունեությունը վերականգնվում է: Նրա մարդկային հոգեւոր եւ բարոյական բարձր որակները, սակայն, նրան ի վերջո դպրության օջախից՝ դպրոցից, պետք է բերեին մեկ այլ լույսի օջախ՝ դեպի Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցի՝ արդեն որպես Հայոց Եկեղեցու սպասավոր: Նա ուսուցչական գործունեության ընթացքում այնքան էր սիրվել աշակերտության եւ նրանց ծնողների կողմից, որ նրա մասին հարգանքով էին խոսում նույնիսկ հարեւան գյուղերում: Այս մասին է վկայում այն փաստը, որ 1945 թ. Հազարջրիր եւ Խոջիղալա գյուղերի համախոսականով ներկայացել է Նոր Ջուղայի Ս. Ամենափրկիչ վանքի առաջնորդարան եւ առաջնորդ Տեր Վահան արքեպիսկոպոս Կոստանյանի ձեռամբ օծվել քահանա: Հայրենիքի նկատմամբ ունեցած սերն ու կարոտը միշտ ունենալով սրտում՝ փափագել է այնտեղ բնակվելու մասին: Նրա երազանքն իրականացնելու իրական հնարավորություն է ստեղծվում, երբ Խորհրդային Միությունը հաղթանակ տարավ ֆաշիստական Գերմանիայի նկատմամբ: Խորհրդային Հայաստանը, որն իր շոշափելի ներդրումն ունեցավ հաղթանակի

գործում, փոխեց խորհրդային իշխանությունների վերաբերմունքը հայ ժողովրդի նկատմամբ՝ արդեն փորձելով վարել սիրաշահողական քաղաքականություն: Վերջինիս արդյունք պետք է համարել նաեւ պետական շրջանակներով կազմակերպված ներգաղթը դեպի Հայաստան:

Օգտվելով ստեղծված բարենպաստ պայմաններից՝ 1946 թ. օգոստոսին Տերտերյան ընտանիքը ներգաղթել է Հայաստան եւ բնակություն հաստատել Թալինի շրջանի Իրինդ գյուղում:

Սակայն սկսվեց ստալինյան բռնաճնշումների նոր ալիք, եւ պետք է ասել, որ նույնիսկ այդ դժվարին ու կրոնամերժ տարիներին երիտասարդ քահանան, հոգեկան ծանր պայմաններում Եկեղեցու հանդեպ իր պարտականությունը սրբորեն էր կատարում:

1955 թ. նորընտիր Ամենայն Հայոց Կաթողիկոս Վազգեն Առաջինի կարգադրությամբ իր եկեղեցասեր ու հայրենանվեր գործունեության համար նա նշանակվում է Խոր Վիրապ վանքի վանահայր: Խոր Վիրապում եւս դրսեւորում է մեծ եռանդ ու նախաձեռնություն եւ իր պարտականությունների անթերի կատարման համար Թալինի, Հոկտեմբերյանի եւ ապա Արարատի շրջանների հավատացյալ համայնքների կողմից սիրվում եւ հեղինակություն է վայելում: Դա աննկատ չի մնում Արարատյան թեմի առաջնորդարանի կողմից, որի երաշխավորմամբ Կաթողիկոս Վազգեն Առաջինը կոնդակով Տեր Հարությունին շնորհում է ավագ քահանայության ատիճան, իսկ մյուս կոնդակով՝ պարգեւատրում լանջախաչով:

Լինելով բավականին զարգացած անձնավորություն եւ բարձր գնահատելով ուսման դերը՝ նա հոգ է տարել, որ երեք որդիները կանոնավոր բարձրագույն կրթություն ստանան: Լինելով գիտակ՝ կյանքի ընթացքում հավաքել է բազմաթիվ եւ բազմաժանր գրականություն, որոնց մեջ աչքի են ընկնում հատկապես իր ժողովրդի եւ քրիստոնեական կրոնի պատմությանը նվիրված բավականին հարուստ ու արժեքավոր ուսումնասիրությունները, մեծ կշիռ են կազմում հոգեւոր բնույթի մեծարժեք մատյանները:

Նա իր ամբողջ գիտակցական կյանքը նվիրեց հայ մտավոր եւ հոգեւոր ծառայությանը՝ 17 տարի որպես ուսուցիչ եւ 63 տարի՝ որպես հոգեւոր հովիվ: Մինչեւ վերջ հավատարիմ գտնվեց հոգեւոր արժեքներին՝ դպրությանը, ժողովրդին, հայրենիքին, կրոնին: Նա անցել է հայ հոգեւորականի բեղուն ուղի: Իր համայնքում իբրեւ ժողովրդականություն վայելող հեղինակություն, փորձություններով ու դժվարություններով լի տարիներին նա իմաստուն հորդորներով շրջահայաց գործողությունների է կոչել իր հոտին՝ ազգային եւ հոգեւոր արժեքների պահպանության եւ զարգացման գործում բերելով իր նպաստը:

Իր կենաց տարիների մեծ մասն անցկացնելով Հայ Եկեղեցու անդաստանում՝ որպես Աստծո Խոսքի քարոզիչ, նա դեռեւս կենդանության օրոք հաշտվել էր մահվան հետ: Այս ասող-խոսող, աշխույժ եւ կենսախինդ այրը գիտեր, որ ինքը եւս մահկանացու է եւ իր ձեռքով գրել պատրաստել էր ապագա շիրմաքարի վրա փորագրվելիք դամբանագիրը. «Հարություն ավագ քահանա Տերտերյան, 1912-20…»:

Մահվանից երեք օր առաջ երգած վերջին երգը Առաջին Հանրապետության Օրհներգն էր, որը նվաղած ձայնով կատարեց մինչեւ վերջ…:

Մարտի 17-ի առավոտյան Արարատ գյուղի Ս. Հակոբ եկեղեցում Տ. Նարեկ աբդ. Ավագյանը մատուցեց Սուրբ եւ Անմահ Պատարագ: Հընթացս Ս. Պատարագի Տ. Արտակ եպս. Տիգրանյանը կատարեց հանգուցյալ Տեր Հոր վերջին օծումը, ապա հուղարկավորության արարողությունը: Տեր Հոր մարմինն ամփոփվեց Ավշար գյուղի գերեզմանատանը:

«Յիշատակն արդարոց օրհնութեամբ եղիցի»: